ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

**«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.**

ք.Գավառ 6 մարտի 2019թ.

Սույն թվականի մարտի 6-ին ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

**որոշեց՝**

- 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ -ին:
- Առաջարկել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ չի կիրառվում՝ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հիմքով:

- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետներում ներկայացնելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 10.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Հ. Ապրոյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ն. Ա. Կուտուզյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Խ. Ժ. Սաֆարյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Լ. Գ. Սիրունյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ս. Պ. Կարապետյան |
| հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Բ. Ղարաբաղցյան |